



Կանաչ տնտեսության զարգացում, ՓՄՁ-ների արագ գնահատման ՌԱՄԱ մեթոդաբանության հիման վրա

Green economy development, Rapid Assessments for SME based on RECP methodology

(հոդվածների շարք «Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն» ծրագրի վերաբերյալ)



Կանաչ տնտեսությունը տնտեսական գիտության ուղղություն է, որ ձևավորվել է վերջին երկու տասնամյակների ընթացքում: Կանաչ տնտեսության տեսանկյունից էկոնոմիկան դիտարկվում է, որպես բնական միջավայրից կախված բաղադրիչ, որի շրջանակներում այն գոյություն ունի և կազմում է այդ միջավայրի մաս: Կանաչ տնտեսություն կոնցեպցիան իր մեջ ներառում է տնտեսագիտության և փիլիսոփայության շատ ոլորտների գաղափարներ, ինչպիսիք են՝ ռեսուրսակողմնորոշված տնտեսությունը, շրջակա միջավայրի էկոնոմիկան, բնապահպանական տնտեսագիտությունը, հակա-աճը, հակա-սպառողականությունը, հակա-գլոբալիզմի, կանաչ անարխիզմը, կանաչ քաղաքականությունը, միջազգային հարաբերությունների տեսությունը և այլն:

Կանաչ տնտեսության տեսությունը հիմնված է երեք աքսիոմայի հիման վրա՝

- անհնար է անսահման ընդլայնել ազդեցության ոլորտը սահմանափակ տարածության մեջ
- անհնար է պահանջել անվերջ աճող պահանջարկի բավարարվածությունը սահմանափակ ռեսուրսների պարագայում
- ամեն ինչ երկրի վրա փոխկապակցված է:

Կանաչ տնտեսագետները, անհամարժեք տնտեսական աճը թյուրիմացություն են համարում, քանի որ այն հակասում է առաջին աքսիոմային: Ըստ կանաչ տնտեսության կողմնակիցների, այն կարող է խախտել էկոհամակարգի բնականոն գործունեությունը:

Սույն հոդվածում կներկայացվեն «Կանաչ տնտեսություն» և «Կանաչ աճ» եզրույթների որոշ սահմանումներ որոնք օգտագործվել են հայտնի համաշխարհային կազմակերպությունների կողմից, միաժամանակ կմեկնաբանվեն՝ օրինակներ, Ռեսուրսների արդյունավետություն և

մաքուր արտադրություն (ՌԱՄԱ) մեթոդաբանության հիման վրա, կանաչ տնտեսությանը և աճին նպաստող, հայաստանյան պիլոտային ՓՄՁ-ներում կատարված արագ գնահատմաների ժամանակ տրված առաջարկությունները և իրականացված միջոցառումները, դրանց բիզնես և բնապահպանական օգուտները և այլն:

Ստորև թվարկված են «Կանաչ տնտեսություն» եզրույթի աշխատանքային սահմանումները ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի (UNEP) շրջանակներում՝

- Ծառայությունների և ապրանքների արտադրության, բաշխման և սպառման հետ կապված տնտեսական գործունեության համակարգ, որը երկարաժամկետ հեռանկարում, հանգեցնում է մարդու բարեկեցության բարելավմանը, առանց ենթարկելու ապագա սերունդներին զգալի բնապահպանական ռիսկերի և էկոլոգիական դեֆիցիտի:
- Այն, ինչը հանգեցնում է մարդության բարեկեցության բարելավմանը և սոցիալական արդարությանը, միաժամանակ զգալիորեն նվազեցնելով շրջակա միջավայրի ռիսկերը և էկոլոգիական դեֆիցիտը: Այն ցածր ածխածնային է, ռեսուրսաարդյունավետ և սոցիալապես ներառական: Կանաչ տնտեսության մեջ, եկամուտների աճը և զբաղվածությունը պետք է պայմանավորված լինեն հանրային և մասնավոր ներդրումներով, որոնք նվազեցնում են արտանետումները և աղտոտումը, բարձրացնում են երգիայի և ռեսուրսների արդյունավետությունը, և կանխարգելում կենսաբազմազանության կորուստը և էկոհամակարգերի շահագործումը:
- Տնտեսություն, որը հանգեցնում է մարդու բարեկեցության բարելավմանը և կրճատում անհավասարությունները, առանց ենթարկելու ապագա սերունդներին զգալի բնապահպանական ռիսկերի և էկոլոգիական դեֆիցիտի: Այն ձգտում է կարճաժամկետ գործողությունների շնորհիվ ապահովել երկարաժամկետ հասարակական օգուտներ ուղղված բնապահպանական ռիսկեր մեղմմանը: Կանաչ տնտեսությունը կայուն զարգացման համընդհանուր նպատակին հասնելու բարենպաստ բաղադրիչն է
- Կանաչ տնտեսությունը «մի կենսունակ տնտեսություն է, որը բոլորի համար ապահովում է կյանքի ավելի լավ որակ՝ մոլորակի էկոլոգիական սահմանաչափերի շրջանակներում»
- «Կանաչ տնտեսություն» նկարագրվում է որպես մի տնտեսության, որտեղ տնտեսական աճը և շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատվությունը, փոխլրացնող նորարարական ձևերով, միասին աշխատում են և միաժամանակ աջակցում սոցիալական զարգացման առաջընթացին
- «Կանաչ տնտեսություն» ստատիկ չէ, այն կերպարանափոխության մի դինամիկ և հաստատուն առաջընթացի գործընթաց է: Կանաչ տնտեսությունը հեռու է համակարգային աղավաղումներից ու ներկայիս տնտեսության հիմնական ուղղվածությունների անգործունեություններից, այն հանգեցնում է մարդու բարեկեցության բարելավմանը և բոլոր մարդկանց համար հավասար հնարավորությունների ստեղծմանը, պաշտպանելով բնապահպանական և տնտեսական ամբողջականությունը՝ մոլորակի սահմանափակ կրողունակության սահմաններում մնալու պայմանով: Տնտեսություն չի կարող լինել Կանաչ, առանց արդարադատ և անաչառ լինելու:

«Ռեսուրսների արդյունավետություն և մաքուր արտադրություն» (ՌԱՄԱ) ծրագիրը Հայաստանում իրականացվում է «Կանաչ տնտեսություն Արևելյան գործընկերության տարածաշրջանում» (EAP Green) ծրագրի շրջանակներում, այն միտված է բարելավել ՓՄՁ-ների բնապահպանական գործունեությունը, ռեսուրսների արդյունավետությունը և մաքուր արտադրությունը և նպաստել կայուն արդյունաբերական զարգացմանը, զբաղվածության ու եկամուտների մակարդակի բարձրացմանը:

ՌԱՄԱ մեթոդաբանությունը լայնորեն ներառում է «Կանաչ տնտեսության» և «Կանաչ աճի/զարգացման» վերևում նկարագրված էլեմենտները, որոնք կիրառվում են ծրագրի շրջանակներում իրականացվող ՓՄՁ-ների ՌԱՄԱ ուսումնասիրությունների, աուդիտների և արագ գնահատման ժամանակ:

Սույն հոդվածում կներկայացվեն որոշ մանրամասներ ՌԱՄԱ ծրագրի շրջանակներում իրականացված արագ գնահատման և դրանց ժամանակ, նյութերի/հումքի, էներգիայի և ջրի արդյունավետ օգտագործման մասին ՓՄՁ-ներին տրված առաջարկությունների վերաբերյալ:

ՌԱՄԱ արագ գնահատում (կամ նախնական ՌԱՄԱ աուդիտ) իրականացվել է Հայաստանի չորս մարզերում գործող «Կանաչ ՌԱՄԱ ակումբներ»-ում ընդգրկված ՓՄՁ-ներից քսանութում, որոնք թվարկված են ստորև (Նկար 1).

Արարատի մարզի, Արարատ քաղաքում՝

- *«Արարատ Աբրիկոն» ՍՊԸ (Աբրիկոն կոնյակի արտադրություն հայկական ծիրանից)*
- *«Արամե և Սոֆի» ՍՊԸ (պանրի և մածունի արտադրություն)*
- *«ԱՄԱՄՍ-ՃԱՆՇԻՆ» ճանապարհաշինական ընկերություն ՍՊԸ (ասֆալտբետոն, շինարարական ավագ, բետոնե եզրաքար, կոպիճ, բետոնե սյուն. Արտադրություն և վաճառք)*
- *«ԳԱԲԱ» ՍՊԸ (հացի արտադրություն)*
- *«ԳԱԼԻՔ» ՍՊԸ (կրաքարի արտադրություն)*
- *«Կավաշեն» ՍՊԸ (տանիքի ծալքավոր ասբոցեմենտե ծածկերի արտադրություն)*
- *«Մաթևոս Սուքիասյան» անհատ ձեռներեց (դեղձի կորիզներից արվեստի և կենցաղային իրերի ստեղծում)*
- *«Արմինաշող» ՍՊԸ (հրուշակեղենի արտադրություն)*
- *«Աշոտ Մարգարյան» Անհատ ձեռնարկատեր (հացի արտադրություն)*

Տավուշի մարզի, Դիլիջան քաղաքում՝

- *«Վիլյա Ռեստ» ՍՊԸ (լվացքատուն)*
- *«Դիլիջան սպա ռեզորթ հոթել » ՍՊԸ (ռեստորանային բիզնես)*
- *«Լևոն Ավագյան» ՍՊԸ (տանիքի կղմինդրների արտադրություն)*
- *«Լիլիթ Աղամալյան» ՍՊԸ (լավաշի արտադրություն)*

Կոտայքի մարզի, Հրազդան քաղաքում՝


- *«Ստեպ» ՍՊԸ (կոշիկի արտադրություն)*
- *«Համսո Փիլիփոսյան» Անհատ ձեռնարկատեր (կոշիկի արտադրություն և վաճառք)*
- *«Լիլիթ Ղուկասյան» Անհատ ձեռնարկատեր (խմորեղենի արտադրություն և վաճառք)*

- «Ռոլանդ և Մուսան» ՄՊԸ (հացի և լավաշի արտադրություն վաճառք)
- «Բսահակ Մելքունյան» Անհատ ձեռնարկատեր (Գորգերի արտադրություն)
- «Վանակաթ» ԲԲԸ (պլաստիկ իրերի արտադրություն)
- «Տիգրան Միրզոյան» Անհատ ձեռնարկատեր (հացի և լավաշի արտադրություն)

Լոռու մարզի, Վանաձոր քաղաքում՝


- «Անաշարտ» ՄՊԸ (պատրաստի սուրճի արտադրություն մեկանգամյա օգտագործման բաժակներով)
- «Ռոզֆրուդ» ՄՊԸ (պահածոների արտադրություն)
- «Լուիզա Նալբանդյան» Անհատ ձեռնարկատեր (գետնանուշի արտադրություն)
- «Մարտին Թովմասյան» Անհատ ձեռնարկատեր (դեկորատիվ սալիկների արտադրություն)
- «Վահե Թովմասյան» Անհատ ձեռնարկատեր (փայտե և կերամիկական իրերի արտադրություն)
- «Լիլիթ Մինոյան» Անհատ ձեռնարկատեր (արծաթե զարդերի արտադրություն)
- «Լուսինե Բարաթյան» Անհատ ձեռնարկատեր (պատրաստի սննդի արտադրություն)
- «Մեղվատուն» ՄՊԸ (մեղրի մաճառի արտադրություն)

Նկար 1. ՌԱՄԱ արագ գնահատումները ըստ մարզերի



Իրականացված ՌԱՄԱ արագ գնահատումների շուրջ 60 տոկոսը իրականացված է սննդի արդյունաբերության բնագավառում, 18 տոկոսը շինանյութերի արտադրության ոլորտում և շուրջ 25 տոկոսը՝ քիմիական նյութերի արտադրության և այլ բնագավառներում (Նկար 2): Նշված հարաբերակցությունը լիովին բնական է հաշվի առնելով, որ սննդարդյունաբերությունը կազմում է ՀՀ ողջ մշակող արդյունաբերության շուրջ 60 տոկոսը (այդ թվում՝ սննդամթերքի արտադրություն՝ 34.3 տոկոս, ծխախոտային արտադրատեսակների արտադրություն՝ 13.3 տոկոս և խմիչքների արտադրություն՝ 12.3 տոկոս):

Նկար 2. ՌԱՄԱ արագ գնահատումները ըստ ոլորտների



ՌԱՄԱ արագ գնահատումը, ծրագրի շրջանակներում իրականացված յուրահատուկ գործառույթ է, որը մեծապես նպաստում է ՓՄՁ-ների սեփականատերերի, արտադրության կազմակերպիչների, մասնագետների և աշխատակիցների կողմից իրականացվող արտադրական գործունեության շրջանակներում ավելի կենտրոնանալ՝ բնապահպանական, ռեսուրսաարդյունավետ և մաքուր արտադրության խնդիրներին:

Այս տիպի ՌԱՄԱ ուսումնասիրության նպատակն է տեղում (երկու-երեք ժամվա ընթացքում), տալ գործնական առաջարկություններ և պարզաբանել դրանց բիզնես և բնապահպանական օգուտները:

ՌԱՄԱ փորձառու փորձագետների խումբը շրջելով արտադրական տարածքներում, ծանոթանալով արտադրական բոլոր գարծնթացներին, տեղում խորհրդատվություն է մատուցում արտադրության սեփականատերերին, կազմակերպիչներին և իրականացնողներին: Առկայության և անհրաժեշտության դեպքում, մատնանշվում են նաև, անվտանգության տեխնիկայի կանոնների և նորմատիվային պահանջների խախտման դեպքերը, քննարկվում են այլ արտադրական ռիսկեր պարունակող և մատակարարների հետ կապված (ՓՄՁ-ներին հուզող կամ կասկածելի) խնդիրները:

ՓՄՁ կողմից արտադրական ցուցանիշների, հումքի, էներգիայի և ջրի վերաբերյալ համապատասխան տեղեկատվության (օպերատիվ ցուցնիշներ, ամսական ծախսեր, փաստացի ֆինանսական տվյալներ և այլն) տրամադրման դեպքում, տեղում կատարվում են համատեղ վերլուծություններ՝ առաջարկվող միջոցառումների տեխնիկական և տնտեսական օգուտները գնահատելու և իրականացմը հիմնավորելու համար:

Հետագայում կազմվում է ամփոփ հաշվետվություն (երեքից չորս էջի սահմաններում), որը սովորաբար ներառում է ութից մինչև տասը գործնական առաջարկություն և տրամադրվում է սեփականատիրոջը:

Ըստ կատարված վերլուծության ՌԱՄԱ արագ գնահատումների ժամանակ առաջարկված միջոցառումների (բոլոր 28 արագ գնահատումների ժամանակ տրվել է մոտ 220 առաջարկություն) շուրջ 70 տոկոսը վերաբերվում է էներգիայի աղբյուրի ընտրության և արդյունավետ օգտագործմանը ու օդային ավազան արտանետումների կրճատմանը և վերահսկողությանը, շուրջ 20 տոկոսը՝ նյութերի ընտրությանը և արդյունավետ օգտագործմանը ու թափոնների կրճատմանը և վնասագերծմանը, շուրջ 10 տոկոսը՝ ջրի աղբյուրի ընտրությանը և արդյունավետ օգտագործմանը ու կեղտաջրերի նվազեցմանը և վերամշակմանը: Նշված հարաբերակցությունը սպասելի էր, ելնելով այն պարզ դատողությունից, որ ՓՄՁ սեփականատերերը հիմնականում ավել մասնագիտացած են բուն արտադրության, մասնագիտական խնդիրներին, տեխնոլոգիական (հումքային և նյութական) հմտություններին և ավելի հաճախ խորհրդատվության կարիք ունեն էներգիայի (բնական գազ և էլեկտրաէներգիա) և ջրի արդյունավետ օգտագործման վերաբերյալ: Իրականացված ՌԱՄԱ արագ գնահատումների ժամանակ առկա են ուշադրության արժանի բազմապիսի օրինակներ:

Օրինակ, «Արմինաշոդ» ՍՊԸ-ում կարողացել են հետվերադարձի հաշվին (մոտ 10% ընդհանուր արտադրանքի ծավալից), ապահովել նոր արտադրատեսակների ստացում: Հետ վերադարձված լավաշից և «Մատնաքաշ» հացատեսակից ՌԱՄԱ «Կանաչ ակումբների» դասընթացների և նախնական գնահատումների արդյունքում արված առաջարկների հիման վրա ներդրվել է պաքսիմատի արտադրությունը: Ձեռք են բերվել սարքավորումներ (մոտ 4000 Եվրո արժողությամբ) և արդեն իսկ կնքված են պաքսիմատի մատակարարման պայմանագրեր, փաթեթավորված արտադրատեսակը նաև առկա է վաճառասրահներում: Արդյունքում հետ գնման ժամկետը կազմել է շուրջ երկու տարի:

Նկար 3. Նյութերի ընտրության և արդյունավետ օգտագործման օրինակ



Արարատի մարզի Արարատ քաղաքում հրուշակեղենի արտադրությամբ զբաղվող «Արմինաշոդ» ՍՊԸ ներառում է միաժամանակյա աշխատող արտադրամասեր և վաճառասրահներ, ոչ միայն Արարատում այլ նաև մայրաքաղաք Երևանում: Առաջնահերթ խնդիր է հանդիսանում արտադրամասերից խոշորագույնի՝ հացա և հրուշակեղենի թխման արտադրամասի օդափոխման համակարգի արդիականացումը: Կան նաև որոշակի խնդիրներ խմորի խյուսի խառնման և մի շարք այլ սարքավորումների արդիականացման հետ: Ընկերությունը գործում է այլ արտադրողների խիստ մրցակցության միջավայրում և կարող է գոյատևել միայն արտադրանքի որակի բարձրացման և ինքնարժեքի նվազեցման շնորհիվ:

Կազմակերպությունը ՀՀ առևտրային կազմակերպությունների «Աճի տեմպի» ցուցանիշներով 2016թ. գրավելով առաջին տեղը, արժանացել է «Leader of the Branch» տիտղոսին, ինչը շուկայում հուսալիության և հեռանկարային լինելու գրավական է:

Լոռու մարզի Վանաձոր քաղաքում դեկորատիվ սալիկների արտադրությամբ զբաղվող անհատ ձեռնարկատեր «Մարտին Թովմասյան» ԱԶ-ն ցեմենտ-ավազային խառնուրդը ստանլու համար որպես ջրի աղբյուր ընտրել է անջրնաջուրը: Օգտագործելով Վանաձոր քաղաքի անձրևաշատ կլիման անհատ ձեռնարկատերը ստեղծել է ջրահավաք մի համակարգ, որի միջոցով անձրևաջուրը կուտակվում է 2 տոննա տարողության բաքում և այնուհետև օգտագործվում արտադրական պրոցեսում: Կուտակված ջուրը բավարարում է ներկայիս արտադրության պահանջարկը և այդ նպատակների համար քաղաքային ջրատարից ջուր չի օգտագործվում:

Նկար 4. Ջրի աղբյուրի ընտրության և արդյունավետ օգտագործման օրինակ



Դեկորատիվ սալիկներ



Անձրևաջրի հավաքման ինքնաշեն համակարգ

Լոռու մարզի Վանաձոր քաղաքի մեկ այլ ՓՄՁ՝ «ՄԵՂՐԱՏՈՒՆ» ՍՊԸ-ն զբաղվում է մեղրի և մեղրի մաճառի արտադրությամբ: Այստեղ մեծ ուշադրություն է դարձվում նաև էներգաարդյունավետության խնդիրներին: Տեղադրվել են լուսադիոդային լամպեր, պատերը ջերմամեկուսացվել են փրփրապոլիստիրոլե սալերով, նախատեսում է տեղադրել նաև ֆոտովոլտային պանելներ: Ինչը կհանգեցնի բնական գազի և էլեկտրաէներգիայի զգալի խնայողության, և օդային ավազան արտանետումների նվազեցման: Հաշվարկների համաձայն՝ տարեկան խնայողությունները կկազմեն մոտ 230 հազար դրամ: Արեգակնային էներգիայի և այլ վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը, բացի բնապահպանական օգուտներից, կարող է եսպես բարձրացնել կազմակերպության վարկանիշը:

Նկար 5. Օդային ավազան արտանետումների նվազեցման և վերահսկողության օրինակ



Մեղրի մաճառ



Փրփրապոլիստիրոլե սալերով ջերմամեկուսացված պատեր



Անթափոն արտադրության կազմակերպման և արտադրության պրոցեսում գոյացող թափոնների մշակման հնարավորությունից զատ «Լևոն Ավազյան» ԱԶ-ում օգտագործվում են նաև պլաստիկ նյութերի թափոններ: Տավուշի մարզի, Դիլիջան քաղաքում գործող անհատ ձեռնարկատերը դասական արտադրանքի մոդիֆիկացման շնորհիվ արտադրում է ցեմենտի ու ավազի թանձր

շաղխից և պլաստիկ նյութերի թափոններից պատրաստված կղմինդր, հատային տանիքանյութ Դիլիջանի կոլորիտին բնորոշ: ՓՄՁ-ին առաջարկված է ֆոտովոլտային էլեմենտներ պարունակող տանիքների պատրաստում, այն առաջավոր սակայն մեծ ներդրումներ պահանջող ՌԱՄԱ միջոցառումներից է:

Կոտայքի մարզի Հրազդան քաղաքում «Վանակաթ» ԲԲԸ-ում թափոններից արտադրում են օգտակար պլաստիկ իրեր:

Նկար 6. Թափոնների օգտագործում Դիլիջանի «Լևոն Ավագյան» ՍՊԸ, Հրազդանի «Վանակաթ» ԲԲԸ-ում



Արտադրանք

Օգտագործված թափոններ

Անթափոն և յուրահատուկ արտադրություն է իրականացնում նաև դեղձի կորիզներից արվեստի և կենցաղային իրերի ստեղծման զբաղված Արարատ քաղաքի անհատ ձեռներեց «Մաթևոս Սուքիասյանը»:

Նկար 7. Մաթևոս Սուքիասյանի յուրահատուկ արտադրանքը



Էներգիայի աղբյուրի ընտրություն և արդյունավետ օգտագործման յուրահատուկ ծրագիր է մշակված Արարատի մարզի, Արարատ գյուղում գործող, հայկական ծիրանից Աբրիկոն կոնյակի արտադրությամբ զբաղվող «Արարատ Աբրիկոն» ՍՊԸ-ում: «Արարատ Աբրիկոն» ՍՊԸ-ում ներքին և արտաքին լուսավորման համակարգում շիկացման և մետաղալուծի լամպերը փոխարինվել են էներգաարդյունավետ (ֆլյուորեսցենտային և լուսադիոդային) լամպերով, որի արդյունքում էլեկտրաէներգիայի ծախսերը նվազել են տարեկան շուրջ 450 հազ. դրամով: Միաժամանակ

ածխածնի երկօքսիդի նվազեցումը կազմել է շուրջ 4.3 տոննա տարեկան: Նախատեսվում է վերականգնվող էներգիայի աղբյուրների կիրառում, արտադրության վերակառուցման ժամանակ:

Նկար 8. «Արարատ Արրիկոն» ՄՊԸ-ում նախատեսվում է առաջավոր տեխնոլոգիաների ներդրում և վերականգնվող էներգիայի աղբյուրներ օգտագործում



Ներկայումս հինգ պիլոային ձեռնարկություններում իրականացվում է ՌԱՄԱ մանրամասնեցված ուսումնասիրություններ, որոնք բացի մատնանշելուց ոչարտադրական թափոնների կրճատման և վերաօգտագործման մեթոդները, էներգիայի ջրի արդյունավետ օգտագործման տարբերաները, ՓՄՁ-ներին կտրամադրեն նաև ֆինանսական և տնտեսական վերլուծություններ, ներառելով առաջարկվող միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ներդրման չափը և տնտեսագիտական այլ ցուցանիշներ՝ զուտ բերված արժեքը, ներքին շահութավերություն նորմը, հետզման ժամկետը և այլն: Այս, ՌԱՄԱ «ներդրման մակրոակի աուդիտները» (Investment Grade Audit) հետազայում կարող են վերափոխվել ՌԱՄԱ բիզնես ծրագրեր և ներգրավվեն կանաչ վարկավորման ծրագրերի մեջ:

ՌԱՄԱ ծրագրի առաջնային ակնկալվող արդյունքը՝ հայաստանյան ՓՄՁ-ներում, շահագրգիռ նախարարություններում, պետական, մասնավոր և հասարակական կազմակերպություններում, կրթական և մասնագիտացված հաստատություններում, ՌԱՄԱ հասկացությունների, տերմինաբանության, մեթոդների և գործիքների վերաբերյալ բարձր իրազեկվածությունն է:

ՌԱՄԱ-ն առաջնորդվում է բիզնեսի բարգավաճման համար էկոլոգիապես անվտանգ, աշխարհում ընդունված մեթոդների և միջոցների մշակման ու գործիքների կիրառման սկզբունքներով: ՌԱՄԱ մեթոդների ու գործիքների ներդրումն անհրաժեշտ է շուկայական տնտեսությունում գործող ցանկացած ոլորտի, ցանկացած ընկերության համար: ՌԱՄԱ ներդրումը շահեկան վիճակ կստեղծի անկախ քաղաքական իրավիճակներից, երկրում կամ տվյալ ոլորտում օրենսդրության անկատարությունից, կոռուպցիոն ռիսկերի առկայությունից և այլն:

ՌԱՄԱ ներդրման արդյունքում առկա են քառակի օգուտներ, որից շահում են ինչպես սպառողները, այնպես էլ բիզնեսը, պետությունը և բնությունը:

ՄԱԱԶԿ ՌԱՄԱ ազգային փորձագետ Տիգրան Մեկոյան

ՄԱԱԶԿ ՌԱՄԱ ազգային համակարգող Նունե Հարությունյան